ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ (ՆԺԴԵՀԻ ԵՒ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Սկիզբը՝ նախորդիւ

Սեր տկարությունը, համաձայն Նժդեհի, որոշակիորեն պայմանավորեց թուրքի հաջողությունը։ Սակայն դա չի նշանակում, թե նա այն կարծիքին է, որ ցեղասպանության օրերին հայությունը ստրկաբար եւ անդիմադիմ կեցվածքով է բռնել հավերժի ճամփան, դարձել թուրքական պետության եղեռնագործ քաղաքականության զոհը։ Հայ մտածողը նշում է, որ ողջակիզված հայությանն ու ճշմարտությանը հարգանքի տուրք տված կլինենք, եթե օր, ժամ, վայրկյան առաջ փարատենք այն ողբերգական թյուրիմացությունը, այն սխալ ու անարդար կարծիքը, թե «յանկարծակիի եկած արեւմտահայությիւնը Եղեռնի օրերին դրսեւորեց իր հոգու միայն մարտիրոս կողմը»[1]։ Նա պնդում է, որ եթե ամենայն ուշադրությամբ վերլուծենք Եղեռնն ամբողջացնող դեպքերը, ապա խորապես կհամոզվենք, որ հայն իր հոգեկան արիությամբ մեծապես գերազանցում էր թուրքին։ Այդ օրհասաբեր օրերին «Թրքահայաստանէն կարելի էր լսել «լացը շղթայուած հերոսութեան», իսկ որոշ վայրերում՝ մռնչիւնը դաւադրուած առիւծների»[2]։ Ճիշտ է՝ հայի տկարությունը ճանապարհ հարթեց թուրքի համար, բայց դա ցեղուրացության տկարություն էր, ինչպիսին ունեցել են պատմությանը ծանոթ ժողովուրդներից շատերը։ Հայը կարող էր փրկել իր ֆիզիկական մարմինը, բայց՝ «...բիւրիցս փա՛ռք իրեն, նա չունեցաւ այդ տկարութիւնը։ Գիտակցօրէն, շատ տեղերում, թէկուզ կրաւորական հերոսացումով, նա զոհեց կէսն իր մարմինէն՝ իր ցեղային էութեան դէմ չմեղանչելու համար։ Նա դարձաւ իր սեփական Զոհը եւ Զոհարարը միաժամանակ։ Եւ փրկուեց ցեղը»[3]։ Առհասարակ,

[1] Ն. տ., էջ 497։
[2] Ն. տ.։
[3] Ն. տ., էջ 614։

ցեղասպանության հարցում հայի զոհարար լինելու մասին միտքը կարելի է հասկանալ երկու իմաստով՝ անկախ այն բանից, որ Նժդեհն այն գործածել է որոշ իմաստով.

1. Հայը զոհարար էր, քանի որ իր քաղաքական կարճատեսությամբ, մոտալուտ արհավիրքի կռահման անկարողությամբ, դրան դիմագրավելուն անպատրաստությամբ «խթանեց» Թուրքի ցեղային նկարագրով պայմանավորված ոճիրը։ Այսինքն՝ մեզ պատժեց մեր տկարությունը Թուրքի միջոցով, մեր տկարությունը հնարավոր դարձրեց աղետը։ «Անհատների պէս,— գրում է Նժդեհը,— կան եւ ազգեր, որոնք երբեմն կը յաջողին, բայց ոչ իրենց սեփական առաքինութիւնների ուժով, այլ իրենց թշնամիների տկարութեանց շնորհիւ։ Նմաններից է շնացեղ Թուրքը, նա՛խ Թուրքը»[4]։

2. Հայը զոհարար էր, քանզի հավատարիմ մնալով իր տեսակին, ո՛չ ասելով ցեղուրացությանը՝ չփրկեց իր ֆիզիկական մարմինը, չխուսափեց կոտորածից։ Այսինքն՝ փրկելով իր ցեղը, պահպանելով իր դիմագիծը՝ նա անգամ կրավորական հերոսացմամբ հնարավոր դարձրեց, «կերտեց» իր մահը, իր հանդեպ ոճիրը։ Նա կարող էր խուսափել դրանից, սակայն դրա համար վճարելու էր իր անդիմությամբ։ Հայն ընտրեց մյուս՝ ցեղուրացության մերժման ճանապարհը։

Առհասարակ, հայոց նկարագրի թերիների քննադատությանը Նժդեհի ստեղծագործություններում բազմաթիվ էջեր են նվիրված։ Այդ թերիներին նա անդրադարձել է ոչ միայն ցեղասպանության, այլեւ ավելի լայն համատեքստում։ Դարեր շարունակ մենք տառապել ենք թերարժեքության բարդույթով, չենք գիտակցել մեր կարողականությունն առ իրականության բարեփոխում։ Կարելի է ասել, որ էպոսի Մհերի պես հաճախ փակվել ենք, սակայն մեր ազգային կյանքի թերությունների քարանձավում՝ սպասելով աշխարհի բարեփոխմանն ու վերջինիս բարեփոխիչ ներգործությանը։ «Մենք այնքան անարժէք ենք թւում մեզ,— գրում է Նժդեհը,— որ չենք կարծում, թէ քաղաքական աշխարհում ոեւէ բանի պատճառ — անգամ դժբախտութեան — մենք կարող ենք լինել։ Ամեն ինչ լինում է, գուցէ մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզնից»[5]։ Մինչդեռ մեր դժբախտությունների համար մեղավոր են ոչ թե բոլորը, բացի մեզնից, այլ նախ եւ առաջ մենք։ Այսինքն՝ եթե կախյալ ենք, ապա մենք ենք մեղավոր։ Եթե տառապում ենք

[4] *Ն. տ., էջ 499։*
[5] *Ն. տ., էջ 59։*

ներքին բաժանասիրությունից, կուսակցական եւ ոչ կուսակցական երկպառակություններից, տարաբնույթ անհաջողություններից ու ձախողումներից, անհայրենիք սպառողի ոչնչակայող ներկայությունից, ապազգային տարրերի կազմալուծող ներգործությունից, ապա այդ ամենում մենք ենք մեղավոր։ Մեղավոր ենք ամենից առաջ այն պատճառով, որ ինքնաժխտման հոգեբանությամբ *մեր խնդիրներն ու դրանց լուծումը հիմնականում «պատվիրակել» ենք արտաքին ուժերին կամ հանգամանքներին։ Ավելին. կարող ենք ասել, որ հաճախ ձոներ նվիրելով ազատագրական պայքարին՝ մեր դարավոր կյանքը վերածել ենք այդ պայքարի չշաղկապված «առկայծումների»։ Եւ դա նաեւ այն պատճառով, որ չենք հասկանում հետեւյալ ճշմարտությունը.* «Պէտք է ազատուել եւ ոչ թէ միայն ազատագրուել»[6]։ *Այսինքն՝ կարելի է արտաքին ազատություն ձեռք բերել, սակայն վերջինս ինքնին չի վկայի ներքին ազատության մասին։ Կարելի է ինքնիշխանության սուբյեկտ ճանաչվել, սակայն չգործել որպես ինքնուրույն որոշում կայացնող։ Հիրավի, եթե հարցը դիտարկենք մերօրյա հայ իրականության համապատկերում, ապա սխալված չենք լինի, եթե ասենք, որ, օրինակ, ԽՍՀՄ կազմից դուրս գալուց եւ ՀՀ անկախացումից ի վեր, երբ* ազատագրվեցինք *արտաքին ուժի կրավորական թիրախի կարգավիճակից եւ արտահայտեցինք ինքնիշխանությամբ հանդես գալու կամք, այնուամենայնիվ չազատվեցինք այն թերիներից, որոնք գուցե զարգացել էին նաեւ ԽՍՀՄ-ի օրոք։ «Ազատագրվեցինք», սակայն, ընդհանուր առմամբ, ներքնապես դեռ չենք կարողանում ազատվել ստրկամտությունից, սարսափի կամ վախի հոգեբանությունից, մեր անկարողության եւ ուրիշների ամենակարողության՝ կրավորական դարձնող գիտակցությունից, մեր զարգացումը արեւմտակենտրոն կամ ռուսակենտրոն փրկարար կողմնորոշումներով պայմանավորելու հոգեբանությունից։ «Քաղաքականութիւնը,— ոչ պատահական գրում է Նժդեհը,— ընդհանրապէս*

---

[6] *Ն. տ., էջ 140։ Հատկանշական է, որ հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության մեջ արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը հաճախ է ուշադրության արժանացել։ Եթե ոմանք ազգային խնդիրների լուծումը տեսնում էին դեպի այս կամ այն հզորը կողմնորոշվելու համապատկերում, ապա ԺԸ. դարի հնդկահայ լուսավորիչները (Հ. Էմին, Մ. Բաղրամյան, Շ. Շահամիրյան) կարևորում էին սեփական ուժերին ապավինելը։ «Եթե մինչև Հ. Էմինը,— գրում է Գ. Մելքումյանը,— եւ ինչու չէ, նրանից հետո էլ հարցը դրվում էր այնպես, թե ո՞ր լուծն է տանելի կամ ցանկալի, ապա Հ. Էմինը հստակ դնում էր սեփական ուժերին ապավինելու, սեփական կողմնորոշման հարցը։ Այս հարցը ենթադրում էր ոչ միայն ԱԶԱՏԱԳՐՎԵԼԸ, այլ նաեւ ԱԶԱՏՎԵԼԸ». տես* Գ. Մելքումյան, *Մարդու հիմնահարցը հնդկահայ լուսավորիչների ազգային-ազատագրական պայքարի փիլիսոփայության մեջ, //«Իմաստասիրական անդրադարձներ», գիտ. հոդվածների ժողովածու, Երեւան, 2006, էջ 48)։*

սարսափում է մենակութիւնից, իսկ կողմնորոշումների քաղաքականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մենակութեան սարսափը»[7]։ Ավելին. ներազգային կյանքում եւս չենք ազատվել մեր խնդիրների լուծումը քաղաքական «փրկիչներով» պայմանավորելու ավանդույթից, քաղաքական կյանքը «փրկիչ-փրկվող» կրոնական բանաձեւով կառուցելու պատեհությունից։ Չենք գիտակցում, որ ժողովուրդների կյանքում վճռական դեր են խաղում ոչ թե արտաքին պայմանները, քաղաքական կողմնորոշումն ու դիպվածները, այլ իրենց հոգեբանական նկարագիրը։ «Մի ժողովուրդի գոյութեան արտաքին պայմանները,— իրավացիորեն գրում է նա,— հարազատօրէն կապուած են նրա ներքին հոգեկան դրութեան հետ։ Ասել է՝ ամեն ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ոյժերի մղումով»[8]։ Նժդեհը համոզված է, որ մենք բազմիցս հասել ենք հաջողության, երբ լինելով հավաքականորեն մենակ՝ հանդես ենք եկել վճռական մենակի *հոգեբանությամբ։ Անդրադառնալով Կարսի անկման պատճառներին՝ նա նշում էր, որ մենք ունեինք բնական եւ արհեստական դիրքերի գերազանցություն, քանակական առավելություն, ավելի լավ պարենավորում, սակայն պարտվեցինք, քանի որ «...չունէինք վճռական մենակի հոգեբանութիւն, ինքնուրոյն կերպով որեւէ բան անելու հաւատ... Պարտուեցինք, որովհետեւ մեր ցեղի ոգու բովանդակ ոյժերն օգտագործելու փոխարէն հովանաւորներ փնտռեցինք»[9]։ Հաշվի առնելով հնարավոր տարբմբռնումները՝ նախապես պետք է նշել, որ վճռական մենակը ոչ թե ազգային ինքնամեկուսացման կողմնակից էր, ոչ թե համագործակցության հանդեպ թշնամանք տածող էր, այլ, ամենից առաջ, որպես լիարժեք սուբյեկտ կայանալու խնդիր ունեցողն ու իր սուբյեկտայնությունը փաստողն էր։ Այսինքն՝ Նժդեհյան* վճռական մենակը ոչ թե կողմնորոշումների դաշտում է որոնում ինքնորոշման իր իրավունքը, այլ ինքնորոշվածության դիրքերից է սահմանում հնարավոր կողմնորոշումների ցանկալի տարբերակը։ Նա իր «ոչ»-երի եւ «այո»-ների ինքնահարգ հեղինակն է, այլ ոչ թե օտարների հղացումների կրավորական համահեղինակը։

* * *

Արդեն նշվել է, որ Հայոց ցեղասպանության հարցը հայոց հոգեբարոյական նկարագրի համապատկերում քննարկել է նաեւ Աստարյանը։

---

[7] *Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 62։*
[8] *Ն. տ., էջ 72։*
[9] *Ն. տ., էջ 62։*

Նա եւս Նժդեհի նման ընդունում է մեղքի մեր մասնաբաժինը։ Ընդ որում՝ մեր մեղավորությունը դրսեւորվել է ինչպես ցեղասպանության իրականացման ընթացքում, այնպես եւ դրա հետեւանքների հաղթահարման ու պատմական արդարության հաստատման գործընթացի շրջանակներում։ Ասատրյանը հայոց նկարագրի, ինքնության հարցը, պայմանականորեն ասած, քննում է երկու տեսանկյունից՝

ա) բնազանցական,

բ) առարկայական-պատմական։

Բնազանցական ասելով՝ նկատի ունենք հայոց ինքնության այն «շերտը», որը, պայմանավորված իր ցեղային առանձնահատկություններով, կարծես նաեւ տարածաժամանակային իրողություններից դուրս յուրահատուկ «տրվածություն» է՝ դրսեւորված առավելապես հայոց հոգեւոր ստեղծագործություններում, ինչպես նաեւ օտարածին արժեքների յուրացման յուրակերպությունների մակարդակում (օրինակ՝ ազգայնացված քրիստոնեության)[10]։

Առարկայական-պատմական մակարդակում խոսքը վերաբերում է հայոց հոգեբարոյական նկարագրի այն դրսեւորումներին կամ առանձնահատկություններին, որոնք, լինելով որոշակի խոտորում կամ շեղում մեր «բնազանցական» էությունից, «դիմակերտում» են «պատմական» հային, որն էլ իր նկարագրի շնորհիվ դարձել է մեր պատմամշակութային, քաղաքական եւ այլաբնույթ թերիների ձեւավորման կամ խորացման հիմնական պատճառը։ Եւ հենց այս «պատմական» հայի կերպարն է, որ չի կարողացել կանխել ցեղասպանության արհավիրքը, չի կարողացել պատժել ոճիրն իրագործողին եւ վերականգնել պատմական արդարությունը։ «Պատմական» հային խորթ չէ բացառձակապաշտությունը, *նա չունի բնազանցական հայի նկարագրին հարիր* անհաղթյան կարելիապաշտությունը *կամ դրա գիտակցությունը։ Նա չունի ինքնափրկության գիտակցությունը, իռացիոնալ կերպով «շղթայակապ» է արել այն։ Հայը, համաձայն հայ մտածողի, վարժվել է իր իրավունքն սպասել օտարների արդարամտությունից։ Դրա համար էլ նա բարեկամներ չունի, որովհետեւ կանխավ մատնում է մուրալու իր*

---

[10] Ասատրյանի համոզմամբ՝ հայոց ցեղային նկարագիրը դիմագծվել է նաեւ հայկական լեռնաշխարհի ներգործությամբ։ Ուստի պատահական չէ, որ նա հատուկ ուշադրություն է դարձրել մեր ազգային նկարագրի ձեւավորման աշխարհաֆիզիկական տեսանկյուններին։ Այդ մասին տե՛ս տողերիս հեղինակի համապատասխան հոդվածը, որը հիշատակվել է սույն գրքի նախորդող գլուխներից մեկում։

տկարությունը։ Ասատրյանը, գաղափարապես «ձայնակցելով» Նժդեհին, ընդդիմանում է այն մոտեցումներին, որոնք հային ներկայացնում էին սոսկ զոհի կարգավիճակով։ Նրա խորին համոզմամբ՝ «թուրքերը մեզ խաբեցին», «անակնկալ սկսուեց Առաջին համաշխարհային պատերազմը» *փաստարկները ինքնարդարացման անհաջող փորձեր են, քանզի* պարտաւոր էինք ունենալ կռահումի ընդունակութիւն *եւ այլն։ Բացի այդ՝ շարունակ կրկնելով* «թուրքը ոճրագործ է, դահիճ, նենգ եւ այլն»՝ *դրանից աշխարհը բնավ չի փոխվի։ «Աշխարհը,— գրում է նա,— կը փոխուի ինքնասրբագրումով, որ ըսել է՝ զղջումի մեծ ողբերգանք եւ նորակերտումի անդուլ ճիգ։ Զղջումը մեծ առաքինութիւն է եւ ապագայ կառուցելու բարոյական ոյժ»*[11]։

Քաղաքական կյանքում հայ ժողովրդի պարտությունները՝ պայմանավորված իր հոգեբարոյական նկարագրի առանձնահատկություններով, բնավ անբեկանելի ճակատագրական տրվածություն չեն։ Արդունավետ քաղաքական աշխատանքներ իրականացնելու համար Ասատրյանն առանձնացնում է երեք գործոն.

ա) պատմական զգացում,

բ) կազմակերպված ուժ,

գ) ապագայատենչ խռովք։

Վերը նշված գործոնների համապատկերում քննելով հայ ժողովրդի պատմությունը՝ Ասատրյանը պատահական չէր համարում մեր քաղաքական կրավորականությունն ու պարտություններին «դատապարտվածությունը», քանի որ մեր կյանքում այդ գործոնները երբեմն բացակայել են։ Իսկ դրսեւորվելիս աչքի են ընկել ոչ ներդաշնակ փոխհարաբերություններով։ Բանն այն է, որ առանց պատմական զգացումի՝ խորք, որով եւ ստեղծագործական ներբնակ զորութենականություն չունի որեւէ կազմակերպություն, առանց վերջինի՝ նպատակամիտ չէ ապագայատենչությունը։

Առհասարակ հայությունը, համաձայն Ասատրյանի, զուրկ է քաղաքական նպատակների եւ գաղափարական համոզմունքների կայունությունից եւ հետեւողականությունից։ «Նոյն անձը,— գրում է նա,— մէկ երեսով կը ներկայանայ ցեղապաշտ, միւսով՝ ընկերվարական, մէկով՝ իդէալիստ, միւսով՝ մատերիալիստ, մէկով՝ Մեծ Հայաստան

[11] Հ. Ասատրյան, *նշվ. աշխ., էջ 88։*

երազող, միւսով՝ Կովկասեան կոնֆեդերացիայի մէջ միակ ելքը տեսնող, ընկերային երեսով՝ թշնամի բոլշեւիզմին, քաղաքականով՝ բարեկամ»[12]։ Այս քաոսի պատճառով է ձեւավորվել անվճռական հայը, քանզի բարոյական անկայունությունն առաջացնում է մտքի ցրվածություն, երկրորդը՝ նպատակի անորոշություն, իսկ վերջինը՝ ճիգի, գործունեության աննպատակություն։ Ասվածի ետնախորքին պատահական չեն նաեւ քաղաքական կազմակերպությունների ծրագրերը, որոնք «օտար ճշմարտութեանց թարգմանական խառնարաններ են», ուր կան հայկական նշանաբաններ, բայց ոչ հայկական գաղափարախոսություն։ Ուստի կարող ենք ասել, որ «պատմական» հայի նկարագիրը կարիք ունի խմբագրման, իսկ մեր ինքնությունն արդիականացման հրամայականի ներքո է։ Այսինքն՝ վերոնշյալ գործոնները հաշվի առնելու եւ դրանք կենսագործելու ճանապարհով է, որ կարող ենք հավակնել մեր նկարագրի թերիներին «մնաք բաերաւ» ասելուն, Հայոց ցեղասպանության կրկնվելը բացառելուն եւ որպես պահանջատեր սուբյեկտ կայանալուն։

РЕЗЮМЕ

В статье анализированы причины Геноцида армян 1915 года в контексте творческих наследий Гарегина Нжде и Айка Асатряна. Идейная солидарность обеих философов проявляется прежде всего в причинах Геноцида армян, которых они касаются с позиции интернализма. То есть признают, что главными причинами резни более чем полтора миллиона армян являются этико-психологические характеристики армян и турок, некоторые особенности их национальной идентичности. Для них зверская политика Османской Турции была органически связана с идентичностью турок и являлась практическим проявлением последнего. А что касается армян, то они виновны прежде всего в том, что в силу своей слабости (в разных смыслах) не смогли избежать геноцида. Перечисленными не исчерпаются все причины Геноцида армян. Нжде и Асатрян придают значимость и внешним факторам.

[12] *Նշ. տ., էջ 93։*

SUMMARY

The article analyzes the reasons of the Armenian Genocide of 1915 in the context of the creative heritage of Garegin Nzhdeh and Hayk Asatryan. The ideological solidarity of both philosophers is manifested primarily in the fact that they speak from the position of internalism about the reasons of the Armenian Genocide. That is, they recognize that the main reasons for the massacre of more than one and a half million Armenians are the ethical-psychological characteristics of the Armenians and Turks, some of the features of their national identity. For them, the brutal policy of the Ottoman Turkey was organically linked with the identity of the Turks, being a practical manifestation of the latter. As for the Armenians, they are primarily guilty of the fact that due to their weakness (in various senses), they could not avoid the Genocide. All the reasons of the Armenian Genocide are not exhausted by the above-mentioned. Nzhdeh and Asatryan also attach importance to external factors.